



Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

(Հոգևոր ճեմարանի դասախոս)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

Գործն է անմահ, լավ իմացեք,
Որ խոպում է դարեղար,
Երևեկ նըրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդապար...

Հայ հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը ծնվել է 1869 թվին, փետրվարի 19-ին, Լոռու Դսեղ գյուղում, քահանայի ընտանիքում:

Հայ Թումանյանի, իրենց տոհմի հայսնիները 10-րդ դարում եկել են Տարոնից և բնակություն հաստատել Լոռու Դսեղ գյուղում:

Բանաստեղծի պապը՝ Օհաննեսը (1795—1868 թթ.) կատարյալ մի հերոս է եղել. հոգով ու մոտքով արի, հաղթանակ: Նա երկար ժամանակ ծառայել է ոռուսական քանակում: 1828 թվին Ախալցխայի մոտերքում թուրքերի դեմ տարած հայոթուշյան համար ստացել է սպայի աստիճան: 1842 թվին կովում է Դադյանանում, 1845 թվին՝ լեռնականների դեմ, 1853 և 1854 թվերին Ախալցխայի ճակատամարտերում ցուցաբերած իր սիրազորությունների համար ստացել է շքանշաններ: Եղել է զրուցաեր, հյուրասեր, քեֆանող: Թումանյանը բնավորությամբ նման է եղել Օհաննես պապին, որի անունով է կոչել են իրեն:

Բանաստեղծի մոր կողմի պապի անունը ևս Օհաննես է: Սա եղել է չորսն, ամուելի ոտք է ունեցել, արհություն, հիանալի շվի է նվագել լուսա սարերում. մահացել է 108 տարեկան հասակում, և վերջին խոսքը այս է եղել. «Այ փուշ աշխարհ, արժե՞ր երկու օրվա համար ծնվելը»:

Թումանյանի հայրը՝ տեր Թադևոսը, Դսեղի քահանան էր: Ծնվել է 1839 թվին:

1870—1872 թվերին սովորել է Սանահնի վաճռում և քահանա ձեռնադրվել 1874 թվին: Տեր Թադևոսը անշափ սիրված էր Լոռիվա գյուղերում, թե որպես մարդ և ազնիվ, տիպար հայ հոգևորական: Բանաստեղծը իր հոր մասին առանձին հարգաճքով է խոսել. «Ամենալավ ու ամենամեծ բանը, որ ես ունեցել եմ իմ կյանքում, այդ եղել է իմ հայրը... Մեծ մարդու մասին գաղափար եմ կազմել իմ հորով...»: Խակապես, մինչև այսօր էլ Լոռիվա գյուղերում խոսում են տեր Թադևոսի մարդասիրության ու գքասիրության մասին: Այս համեստ հայ հոգևորականը անշափ սիրել է երգն ու նվազը, հերթաքի ու զրոյցը, նվազել է չոճգորի վրա, շատ հաճախ իր տանը մեջիսներ սարքել:

Բանաստեղծի մայրը՝ Սոնան, եղել է առողջ, կենսախինդ, գեղեցիկ և դիմացկուն մի կին: Առավոտից մինչև երեկո աշխատել է դաշտում, ծնել ու մեծացրել է 8 երեխա՝ 5 տղա և 3 աղջիկ: Ծնվել է 1842-ին և մահացել 94 տարեկան հասակում՝ 1936 թվին: «Ունի որ սարի բան կա իմ մեջ՝ դա իմ մորից է՝ նանից, ամենաբարձր սարերում, ծաղկու տեղերում է պահել ինձ», — գրում է Թումանյանը:

Արա համապետական այսպիսի մթնոլորտում և ծնողներից ծնվում ու հասակ է առնում ապագա ամենայն հայոց բանաստեղծը:

Հովհաննեսը եղել է ծնողների ավագ եղեխան և դրա համար էլ նրան շատ են սի-

րել ինչպես նոր, այնպես է մոր կողմի բարեկամները։ Նա եղել է առույգ պատաճի, հազին կարմիր արխալու, մորթե փափախը գլխին, ուղքերին տրեխներ, ճիպուղ ձեռքին հանդերում իր հասակակիցների հետ եզներ ու գառներ է արածեցրել։

Փոքրիկ Հովհաննեսը գրամանաշ է դատավոր 1877—79 թվերին Նևերում, Սահմանական վարժապետին և իր նորեղբայրը, տիրացու Գրիշայի մոտ, որոնց գիտելիքները ուշիմ պատաճին շատ կարճ ժամանակում սպառում է։



Զախից աջ՝ Ավ. Խամալյան, Լ. Շանթ, Դ. Աղայան, Գ. Դեմիրճյան և Հովհ. Թումանյան

Բանաստեղծը գեղատեսիլ, զովասուն լոռվա արդերում դեռ մանկուց զգացել է բնության հմաքը, իրաշք գեղեցկությունը, լսել թշունների ուրախ դալլայը, Դերեդի խշողը, դիտել բարձր լեռներից արևածագն ու մայրամուտը, մոտիկից հաղորդակից է դարձել քարից հաց քամող հայ զյուղացու վշտին, ուրախությանը և հետազայտ այդ բոլոր հմացությունները հանձնարել կերպով դրսուրել է ստեղծագործելիս, հայկական լեռնաշխարհն ու հայ մարդուն բնութագրելիս։ «Այլ ծողովոյի ընթերցողների համար Թումանյանի պուեմներին (օրինակ՝ «Անուշ»ին) ծանոթանալը ժամանակակից Հայաստանն ու նորա կյանքը ճանաչելու գործում ավելի բան կտա, քան կարող են տալ հատուկ հետազոտությունների հաստ հատորները», —գրել է Վ. Բրյուտովը։

1879 թվին տեր Թաղևոսը երեխային տանում է Էջմիածնի Գևորգյան ճեմարաքն տալու, սակայն ինչ-ինչ պատճառներով, տղային նորից ևս է բերում գյուղ։ Նովե թվականին Հովհաննեսին տալիս է Զալպօղու Տիգրան վարժապետի երկու դպրոցը, որը ժամանակի առաջավոր ուսումնական հաստատություններից մեկն էր Գուգարաց աշխարհում։

Ինքը՝ Տիգրան տեր Դավթյանը, զարգացած, հայունանակ մի անձնավորություն էր. ավարտել էր Թեոդոսիայի հայկական վարժարանը 1866 թվին, եղել էր Սարգսի եպիսկոպոս Հասան-Զալպօղյանի սանը, ապա՝ քարտուղարը, եղել էր արտասահմանում, գիտեր բազմաթիվ օտար լեզուներ։

Այս դպրոցում դասավանդվում էին հետևյալ առարկաները. հայոց լեզու և պատմու-



Զախից աջ՝ Գ. Բաշինչաղյան, Կոմիտաս վարդապետ, Ղ. Աղայան, Հովհ. Թումանյան, Վլթ. Փափազյան,
Ա. Չոպանյան և Սալ. Խաჩալյան

թյուն, ուստաց լեզու, աշխարհագրություն, թվաբանություն, երգեցողություն, ֆրանսենն, ֆիզիկա և ընդհանուր պատմություն։ Բոլոր դասառութեան էլ զարգացած, իրենց սուրբ գործին նվիրված և ունակ մարդիկ էին։ Բացի սրանց Տիգրան վարժապետը ուներ նաև հարուստ գրադարան։

Ինչպես ցորենի հատիկը պարարտ հոդում, այնպես էլ մի ու ու ընդունակ պատաճի Հովհաննեսը այս նպաստավոր միջավայրում

աճում է հոգով ու մտքով և անում բանաստեղծական իր ստացին թոթովանքները։

Հստ թումանյանագետների, տանեերկուամյա Հովհաննեսը մուտք է գործում ապոլոնյան ասպարեզ «Հոգոս հատոր» բանաստեղծությամբ։

Զաղազողու դպրոցում Թումանյանը մեծ սիրով ու ջանամիտությամբ սովորում է հայոց լեզուն, իսկ ժողովրդի պատմությունը։ Նրա ամենաառաջին կարդացած և սիրած

գրքերն են եղել՝ Խ. Արդվյանի «Վերք Հայուսանի»-ին, Միք. Նաբանդյանի, Մ. Պետրոսյանի, Ռ. Պատկանյանի, Ղ. Ալիշանի, հատկապես Րաֆֆու տաեղծագործությունները, որոնց ազատասիրական շնչի ներքո ձևավորվում են ապագա բանասեղծի հայրենասիրական գգացումները:

Ֆերդան Վարժապետի դպրոցում Թումանյանը սովորում է շորս տարի, մինչև 1883 թվականը: Նույն թվին հայրը ճրան տանում է Թիֆլիս և տալիս զինվորական դպրոց: Սակայն շատ կարճ ժամանակամիջոցում գգացուն պատահին հասկանում է, որ զինվորական դառնալը իր կանքի կոչումը չէ և այդ ասպարեզը չափազանց խորը է իր հոգու համար, դուրս է գալիս և, փայլուն քընություններ բանձնելով, ընդունվում է Ներփայան դպրոցի երկրորդ դասարանը:

Թիֆլիսը 19-րդ դարի երկրորդ կեսերից ակամած դատում է արևելահայ մշակույթի կենտրոնը: Ռուսաստանի ու Եվրոպայի համարաներն ավարտած հայ առաջավոր մովորականությունը կենտրոնանում է այստեղ և բացում դպրոցներ, հրատարակում թերթեր, ստեղծում պրոֆեսիոնալ բարորոն՝ ազգը լուսավորելու, քաղաքակրթելու համար:

Թիֆլիսում պատահի Թումանյանի համար ստեղծվում են ավելի հարմար ու բարենը պատ պայմաններ զարգանալու և շրջապատ ստեղծելու համար: Ներփայան դպրոցում նա հափշտակությամբ կարդում է ձեռքը ընկած գրականությունը. հայ, ուսու, առևմտաեկորապական, արևելյան: Ժամանակակիցների վկայությամբ պատահի Հովհաննեսը գիշերներով չի քնում և զրադկում է ընթերցանությամբ: Նա մասնավոր սիրով և ուշադրությամբ հետևում է հայ ծողովրդի պատմության և լեզվի դասերին. պատմությունը դասավանդում էր ժամանակի անվանի պատմավիպասան Մերենցը՝ Թումանյանի ամենասիրած մարդկանցից մեկը:

Բանասեղծի ներփայանական շրջանի համակենտրոն երևում է, որ նա հյութական սույն կարիքի մեջ է եղել. սնունդը թույլ, ձմռանը առանց վերարկուի, վտիտ և ինքնամփոփ:

Թիֆլիսի մշակութային ասպարեզը չափազանց բարերար ազդեցություն է գործում Թումանյանի վրա. Եռամյա ուսանողական շրջանում նա գրում է մի շարք բանասեղծություններ, վայելում իր ուսուցիչների ու ընթերցան հասարակության սեռն ու համակրանքը և ձեռք քերում արդեն բանասեղծի համբաւ: Այդ տարիներին նա գրում է. «Երբ որ կանցնի ձմեռ սաստիկ», «Հայ վաճառականը», «Ինչո՞ւ ես տիտոր», «Շունը ու կաղնին», «Անիծած հարսը», «Լոռեցի Սաքոն», «Անուշը», թարգմանում է Ժուկովսկու «Աքիլեսը», Բայրոնի «Զայդ Հարուլը»-ից մի հաստված, «Ծիյինի կալանավորը», Լերմոնտովի «Մծիրին», Պուշկինի «Օլեգի եղան», «Ջրահարսը» և արևմտա-

«Նահապետի ողբը» և այլ բանաստեղծություններ:

1886 թվին ընտանելեկան ծանր պայմանների պատճառով Հովհաննեսը ստիպված թողնում է ուսումը և վերադառնում Դմել:

Բանասեղծը մեծ երգանքը է ունեցել ուսումը շարունակելու որնէ համալսարանում, սակայն հյութական անապահով վիճակը թույլ չի տվել, և հրա այդ համաստ ցանկությունը ընդմիշտ մնացել է անկատ:

1887 թվին Թումանյանը աշխատանքի է մտնում Թիֆլիսի հայոց հոգևոր կուսիստորիայում որպես գրագիր և այդ պաշտոնում աշխատում է մինչև 1892 թվիը: Այս տարիներին երիտասարդ բանասեղծը խիստ կերպով զրադկում է հերենազարգացմաբ: Ուսումնասիրում է Բայրոնի, Բերանձեի, Ծիլերի, Ֆիրդուսի, Խաքանու, Խայմի, Նիզամու, Հաֆիզի, Սադրու և դասական այլ հեղինակների աշխատությունները:

1888 թվականին Թումանյանը ամուսնանում է Թիֆլիսի Գայանյան դպրոցի աշակերտությունի Օլգա Մանկայանի հետ:

Երիտասարդ Հովհաննեսն արդեն իսկական բանասեղծի համբաւ է վայելում: Նըուան խորհուրդ են տալիս բանասեղծությունների ծողովածու հրատարակել: 1889 թվից սկսած նա զրադկում է այդ գործով: 1890 թվին Մուկվայում լույս է տեսնում Թումանյանի բանասեղծությունների առաջնի հատորը, որը մեծ սիրով է ընդունում դժերցան հասարակությունը: Մամունի հասուկ գրախոսականներով հանդես են գալիս անվանի գործականագետներ Մանուկ Արելյանը ու Լուն Մանկելյանը և ողջունում երիտասարդ բանասեղծի մուտքը գրական ասպարեզ:

1892 թվականին Թումանյանը թողնում է նախկին գրագրի պաշտոնը և անցնում աշխատանքի հայոց հրատարակական ընկերությունում որպես գրասենյակապետ: Սակայն այստեղ ևս երկար չի մնում, հրաժարվում է աշխատանքից, և դա լինում է նրա վեռջին ծառայությունը:

90-ական թվականները ամենաքեղմնավոր և հշանակալից տարիներ են բանասեղծի համար. այս շրջանում նա գրում է իր հետևյալ գործերը՝ «Դեպի անհոնը», «Աղքատի պատիվը», «Անդարձ ճամրորդներ», «Տրտության ասղմուներից», «Արծիվն ու կաղնին», «Անիծած հարսը», «Լոռեցի Սաքոն», «Անուշը», թարգմանում է Ժուկովսկու «Աքիլեսը», Բայրոնի «Զայդ Հարուլը»-ից մի հաստված, «Ծիյինի կալանավորը», Լերմոնտովի «Մծիրին», Պուշկինի «Օլեգի եղան», «Ջրահարսը» և արևմտա-

Նվրոպական մի շաբթ դասական հեղինակ-
ների աչքի ընկնող գործեր:

ԴԱՅԲԱՐՅՈՒԹՐԱԿԱՆ ԹՎԱԼԱՆՆԵՐԻՆ ԹՈՒՄԱՆ-
ՅԱՆԻ ԸՆՏԱՑՔԸ արդեն բազմանամ էր
դարձել. ուներ վեց աղջիկ և չորս տղա: Նա
չուներ սափական բնակարան, ապրում էր
վարձու տներում. Այութապես չափազանց
անապահով վիճակի մեջ էր: Այդ շրջանում
նրա գրած համակմներից չկա մեկը, որի մեջ
հաշած չինչ իր ծայրը աստիճանի աղքատ
դրության մասին. «Անցյալում հաշվեցի, տե-
սա որ պարտատերերին թիվը արդեն վա-
ղոց անցել է հիսունից: Ամեն փողոցի վրա
պարտատեր ունիմ—և ամեն տեղ ստիպված
եմ ճանապարհներու ծովել—խուս տպա»:

Իր համակմներից մեկում գրում է, որ մի
խումբ լուսամիտ մարդիկ իրեն առաջարկում
են գնալ Եվրոպա, կրթություն ստանալ, սա-
կայն բանաստեղծը, զգալով իր հոյութական
անմիտար վիճակը, պատասխանում է.
«Ծովայ բախս կիսեր ինձ համար, եթե կա-
րողանայի պարտքերս վճարել, այս կամ այն
փողոցով անցնելու պատություն ձեռք բե-
րել կամ պարտք անելու կարիքից ազատ-
վել»:

Թումանյանի այս բազում դժվարություններին ավելանում է մի խոր ու հոգեւաշ թախիծ ևս. 1898 թվականին մահանում է
նրա ամենասիրած անձնավորությունը՝ հայ-
որը, որի կորուստը մեծ տառապանք է պատ-
ճառում բանաստեղծին, քարքայում նրա ս-
ուռջությունը ընդմիշտ: Այդ ժամանակվա-
նից սկսած նա տառապում է մի շաբթ հի-
վանդություններով և տարվա մեծ մասը
անցկացնում է Ուրավելի, Աբասթումանի,
Բորժոմի, Ծաղկերի և այլ վայրերի առող-
ջարաններում ու հիվանդանոցներում և
կորցնում իր ոսկե ժամանակը:

Թումանյանը չափազանց կենսախինդ և
գործունա մարդ է եղել, երբեք չի հուսա-
հատվել, կանքի դժվարությունները չեն
կարողացել ընկնել նրան, միխթարվելու մի
քան, հույսի մի ճառագալթ գտնել է միշտ՝
իր վշտերը փարատեղու համար: Մի առիջով
նա գրել է. «Ինչքա՞ն կենսունակ է մեր ժո-
ղովուրդը և բնակ հուսահատմել չցիտի իր
շատ խորհրդավոր ճանապարհին»:

Հանճարեղ բանաստեղծի ամենասիրած
անձնավորություններից մեկն է եղել Խրիմ-
յան Հայրիկը, որի անունը մեծ պատկա-
նաբրով է արտասանել: Նա սովորություն է
ունեցել իր գրուցների ժամանակ հետաքրր-
քիր դեաքեր պատմել այդ մեծ հոգևորակա-
նի կյանքից: 1893 թվին երիտասարդ բա-
նաստեղծը շտապում է արժանանալու ամե-
նայն հայոց Հայրիկի բարձր ուշադրության
և նրան է ուղարկում իր նոր լուս բնծարա-
ծ բանաստեղծությունների ժողովածուն: Այդ

մասին նա Թիֆլիսից գրում է Էջմիածին,
Ղազարու Սղայանին. «Բանաստեղծու-
թյուններու շուտով կուղարկեմ Հայրիկին ըն-
ծա, որ կարդա միտրը ցնծա, որ կներկա-
յացնեք, ասացեք, ես հալա ոչինչ, կեսը
գրալամանուն ա դեռ...»:

Թումանյանը բազմից հանդիպել ու
գրույց է ունեցել Խրիմյանի մետ և ամեն ան-
գամ մի նոր վեհություն ու խորություն է տե-
սել հայ մեծագույն կաթողիկոսի հոգում:
Հետազայում էլ, իր կյանքի վերջին տարի-
ներին, երբ խոր էր բացվում հայոց Հայրի-
կի մասին, բանաստեղծը ասում էր. «Խրիմ-
յանը մեծ մարդ էր, շատ մեծ...»:

Հովհաննես Թումանյանը անշափ բարձր
է գնահատել հայ հոգևորականի դերը մեր
ժողովրդի կյանքում: Դեռ 1892 թվականին
իր երբեմնի դասընկեր, ապա Էջմիածնի
միաբան, վարդապետ Արտեն Ղյուճյանին
գրում է. «Սիրելի ընկեր, հայոց կուսակրոն
հոգևորականությունը այս օրերում ծանր
գործ ունի կատարելու—մեր ներկա վիճակի
բարվորման համար և ապագայի ապահո-
վությունը դրված է նորա առաջին, որու էլ
մտնելով այդ դասակարգի մեջ պատասխա-
նատու հոգատարի պարտականություններ
և հանձն առնում...»:

Բանաստեղծը բաջատեղյակ էր մեր ժո-
ղովրդի անցած դարերի բարբարու ճանա-
պարհին և այդ ընթացքու հայ հոգևորա-
կանության կատարած հայրենանվեր, ազգ-
օգուտ մեծ գործին: 1893 թվին նոյն Ա.
Ղյուճյանին ուղարկած իր հաջորդական ճա-
մակներից մեկում երիտասարդ Թումանյա-
նը գրում է. «Հավատում եմ, որ այսի լինեն
«Հովի քաջ, որ զանձն իր դեմ ի վերայ ոչ-
խարաց»:

Թող այդ սրբազն հոգսերի լծի տակ և
քեզ առաջնորդեն ու ոգևորեն այն փայլուն
ինեալիներո, որ փայփայել ես ազատ օրե-
րում. դժվարութան ժամանակներում հիշիր
Ներսեսներ, Սահման, Ալեքս, Եղիշե.... և ա-
մեն րուե մտաբերիո, որ դու նրանց ժողո-
վորդն ես հովվում: Աշխատիր, ընկեր, նով-
վել և ասապանել այդ վեհերի հոտը շրերի
ափերի հանգստան տեղերում, դալար մար-
գերում և իմենց նրա համար վահան թշնա-
միների դեմ»:

Թումանյանը որպես ընտանիքի հայր չա-
փազանց քերմ ու հոգատար է եղել իր տար-
զավակների նկատմամբ և գրեթե բոլորին
էլ տվել է հայեցի կրթության: Նա իր ժա-
մանակի մի մասը սիլու հատկացել է ե-
րեխաների դաստիարակության գործին,
նրանց ներշնչել է իմենց ազնիւ, համեստ, ունե-
ալ բարոյական բարձր նկարագիր, զրադ-
վել վեհ ու ազգօգուտ գործերու. «Բարոյա-

պես ուժեղները միայն կարող են տիրել առքայլութեանը, —խրասում է հայր-քանաս-տեղծը: —Գիտության մեջ պեսք է խորանալ, խորանակ և միևնույն ժամանակ բարձրա-նալ ու վերսից, բարձրից նայել —մանր հայր-ցերով չտարվել՝ չկորչելով համար: Խնդի ան-տառ մտնողին աւտառը անձայր ու անհուն կյուլա, շատ մեծ, բայց եթե սար բարձրանա, բարձրից կենաւի նրա սահմանը, չափը»:

Չափ հաճախ բանաստեղծը իր բոլոր ե-րեխաներին էլ նատեցրել և առանձին հատ-վածներ է կարդացել նրանց համար՝ Ար-Լաստիվերտցոց, Կ. Գանձակեցոց, Մ. Ու-րիայեցոց, Եղիշեից, Խորենացոց, Փովստ-սից, ապա պատվիրել է սիրել մեր հարուստ մշակույթը, հավատարիմ մնալ նախնաց հավատքին ու ստորովյաներին, վառ պատել մեր հերոս նախնական էլ պատահական չէ, երբ հետագայում Թումանյանը բոլոր զա-վակներն էլ դարձան պիտանի մարդիկ մեր ժողովրդի համար:

Ամենայն հայոց բանաստեղծը մեծ ակնա-ծանրով խոնարհվել է մեր դարավոր մշա-կույթի հանճարեղ գործիչների սուրբ հիշա-տակի առաջ: Եթե 1888 թվին Պ. Արամյանը Ռուսաստանից վերադառնում է Թիֆլիս և հանդես գալիս Համեսին դերով, ընդմիջմա-նը այսօգի, խորոշում հանդիսաւուր գտնում է, որ Արամյանն առ դերում ավելի բարձր է, քան աշխարհական ողբերգու-ներ Թումազը Սալվինին և Հոնեասու Ռու-սին, հանդիսաւուն-Թումանյանը կյանքում առաջին անգամ իրեն հպարտ է զգում հայ ծննդու համար:

Թումանյանի համար իմաստության, ներ-շրջումի և ոգևորության անսպառ առքյուր են հանդիսացել՝ շարականը, միջնադար-յան ասնդիստության երգերը, Շնորհալու, Նարեկացու, Կ. Երզեկացու, Գ. Աղթամարցու, Ն. Քոչակի երգերն ու բանաստեղծությունները, որոնք նրա մշտական բնիքերցա-նության գործերն են եղել և սեղանի զարդ կազմել: Բանաստեղծը հայ ժողովրդական երգերից ամենաշատ սիրել է «Ալսուսի»-ն, «Տեր, կեցո»-ն և Սալաթ-Նովակի երգերը: Նա մասնավոր սեր, ուշադրություն և հար-գանք է ցուցաբերել մեր մշակույթի գործիչ-ների անգամ յոթների և ծովների նկատ-մամբ, որոնք ապրում էին Թիֆլիսում, ինչ-պես օրինակ՝ Արդվանի, Սալաթ-Նովակի, Գ. Համբերդյանի և այլոց, հաճախ այցելու-թյան է գնացել նրանց:

Թումանյանը դեռ անցյալ դարի 90-ական թվականներին իր բարեկամներից մենքին գրել է. «Ուզում եմ Շեքսայիր լավ ուսում-նասիկեմ, նույնական մի քանի ընտիր կյա-սիկներ, մեսու ճանապարհորդեմ, ժողո-

վորդն ուսումնասիրեմ, մարդուն լավ ճա-նաչեմ...»: Դժբախտաբար բանաստեղծին բախտ չիմարկվեց լինել Եվրոպացում, որի վաղ շրջանի բարքերին միայն ծանրթացալ իր սիրած Շեքսայիրի և մի շարք կրասիկների երկերի միջոցով: Թումանյանի հյուրա-կան սույն միջոցները հազիր բավարարեցին ճանապարհորդելու իր դժբախտ հայրենիքի որոշ գալաքներում՝ Լոռի, Արարատյան դաշտ, Անի, Վան, Մուշ, Ալաշկերտ, Ախալ-ցեղիա, Ախալքալաք, որտեղ նա մտածից շփվեց տեղի հայ հասարակության նետ, ու-սումնասիրեց նրանց հիստորիացը, գրի ա-ռավ ու մշակեց բազմաթիվ լեգենդներ, որոնց մեջ հշիտու է խոհափիլիստիայական տարրը, զգացվում է, որ հեղինակը իսկա-պես տիրապետում է մարդը և բնությունը ճանաչելու մեծ արվեստին:

Թումանյանի հանճարի մի կողմն էլ ժո-ղովուրդների մեջ բարեկամություն, խաղա-ղություն բարողելու ու ստեղծելու է թե՛ բա-նիվ և թե՛ գրչով: Բազմիցս կովկասյան ժո-ղովուրդների մեջ ծագել են վեճեր, որոնց հաջորդել են արյունաելու, դեցասպան կր-ուիկներ: Ահա այդ դժմանակ օրերին ամենավե-հայոց բանաստեղծը, վտանգելով իր կյան-քը, գնդակների տարափի տակ մնել է եր-կու հակառակ կրոմերի բանակները, շատ կարճ ժամանակամիջոցում լուծել կմնանու հարցերը և հաշտեցրել է նրանց: «Ամբողջ մարդկությունը մի հնտանիք է: Ժողովուրդ-ները էլ մեծ հնտանիքի անդամներն են», —բարողել է Թումանյանը, ուստի նրանք պեսք է ապրեն հաջու ու խաղադ: Այս հո-ղագուները, Աստծոն ատեղծած անսպառ բա-րիքները հավատարապես պատկանում են բոլոր ժողովուրդներին էլ: Սակայն, նժրախ-տարա այլ է իրականությունը. «Փոքր ժո-ղովուրդները, հիրավի, գրիված բանվորներ են ազատ ու անխիճ իմաստերի անապարհների վրա», —իրավացիորեն նկատել է Թուման-յանը:

Մարդակեր բանաստեղծը անհուն սիրով կապված է եղել Վրաստանի և նրա ազա-տաւուն ժողովորդի մետ ու զարմանայի հե-ռաւտեսությամբ այս երկու բազմաչարչար ազգերի ճակատագիրը կապում է իրար ինեւ: «Առանձնապես ուժեղ սիրել եմ մեր եղբարակից վրացի ժողովուրդը, որի մեջ անց եմ կացրել իմ կյանքի մեծագույն մասը և որի մետ կապված եմ շատ խոր ու ամոր կապերով», —խոստվանում է բանաստե-ծու: Իսկ միացուն բնորոշել է այսպես. «Ին-քը՝ վրացին սյուն է, իսկ վրացական պոե-տը՝ լու կրկնակի սյուն է»:

1912 թվականին Թիֆլիսում հիմնվում է «Հայ գրողների կովկասյան ընկերությունը»,

որի նախագահն է ընտրվում Թումանյանը:

1914 թվականին ծագում է առաջին համաշխարհային պատերազմը: Հայրենասանը բանատեղը, զգալով, որ վտանգված է իր հայրենիքի և ժողովրդի ճակատագիրը, հենց պատերազմի սկզբից, երկու անգամ՝ 1914 և 1915 թվերին շտապում է Արևմտյան Հայաստան՝ օգնություն կազմակերպելու, փրկելու իր տառապած ժողովրդին: Բանատեղը անձամբ ականատես է լինում Ալաշկերտի, Արդարի, Վանի, Սարիղամիջի հոգապին, դառնանում է զգայուն բանատեղի հոգին: Այդ զգայացունց պատկերների մասին հայ իր համակերի մեջ գրում է. «...տեսնել գերիների խմբեր, բնիւած դիմուներ, այժերած գորդեր—միմասն շներն ու կատուներն են մնացել, որ սուկայի ոռնում ու մասնում են գիշերները, սոված ու անտեր... Հանդերը ի են մերկերով, բայցածներով, հիմանդներով, յացողներով, տնքացողներով: Երեխանե՞ն, երեխանե՞ն ը, երեխանե՞ն անտեր, սոված, հիվանդ...»:

Պատերազմի այս ահավոր տարիներին, եթե որոշ մտավորականներ իրենց ընտանիքներով հեռանում էին Կովկասից ընդհանրապես՝ անվտանգ մևալու համար, բնոհակառակն, ամենայն հայոց բանատեղին, թղթերով իր բազմանդաւ ընտանիքը, գրիչը, անձնական հաճույքները, նվարդ աղօրկան հետ միահին շտապում է ՀՀմանակին՝ տեղ անելու, խնամելու և ամորելու հայոց անթիվ ու անհամար որբերին և անտունիներին: Եվ եթե լրա էր հասնում գիշերը, մութը ծածկում էր բոլոր հոգեւանական պատկերները, որբերի ու գաղթականների միջից լրավում էին տխոր ու մետաղձոն երաեր, տառապած հոգու երկարաձիգ մեղեղիներ, փող էր գայիս բանատեղի հոգին, այլև չէր կարդանում զավել հոգում և լաց էր լինում աղեկսոր հառաջաշերով:

Ի լրումն այս բոլորին, պատերազմի դաշտից Թումանյանին է հասնում նրա երկու եղբարձրների մահվան բոթը, ապա քիչ ուշ, 1918 թվին Վանի զաղյօթ ժամանակ սպանվում է բանատեղի ամենասիրած, հոգուն մոտիկ զավակը, երիտասարդ, խելացի, մեծ

ապագա խոստացող Արտավազդը: Դե եկ ու դիմացիր, բանաստեղծ. Աս՝ այս սովորակի պահերին որից միջոց չգտնելով, ասել է. «Վերջապես Երանելի Հորի նախն պիտի բացականչենք՝ օրինված լինի Աստուծու կամքը»:

1919 թվի փետրվարի 25-ին Թիֆլիսում, Լիսիցյանների հայկական գիմնազիայում, մեծ շոքով տոնվում է Թումանյանի ծննդյան 50-ամյա հորեվանը:

Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, եղացրների ու զավակի կրուսար բոլորովին հյուծում են Թումանյանի՝ առանց այն էլ վատառողջ մարմինը: 1922 թվին Թիֆլիսում հա ենթարկվում է սուսմռսային վիրահատության: Հայաստանի կառավարությունը որոշում է հրան բուժելու համար ուղարկել Բենյին, սակայն Մովկանում բանատեղի միհաւը ծանրանում է և 1923 թվի մարտի 23-ին, 54 տարեկան հասակում, վախճանվում է ամենայն հայոց բանատեղին, անհուն վիշտ պատճառելով ողջ հայ ժողովրդին: Նրա աճունը փոխադրվում է Թիֆլիս և ամփոփվում Խոջիվանքի գերեզմանատանը:

Մեծ Թումանյանը իր սուեդագործության մասին պաստես է արտահայտուել. «Խ՞ն եմ գոյն—մի բանի սոյ բան, էն էլ ձեռած, ոտի մրա... Երազներս, մորերս ամենի շրեն են, քան գրածներս...»: Բանատեղը կանքում շատ-շատերի հետ է մոտ եղել, ունեցել է անթիվ ու անհամար բառեկամներ, բարի ամենայն իմաստով մտերիմ է եղել երկու մարդու հետ միավել՝ Ղ. Աղայանի և զրաւան Անոռանելիսի:

Բանատեղը շահաւանց յաւ էր ճանաչում իր մատ ժողովրդին և տառմական այդ բոնուրոնի մեջ նա խոհեմարար կանխագած և մեծ հավատու գրեց.

«Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարքին.

Ու պիտ դառնաս էն երկիրը, որ ձգուում է մեր հոգին—

Հույսի՝ հայրենիքը,
Լույսի՝ հայրենիքը»:

